

Բանալի բառեր՝ փոխարժեք, գնողունակության պարիտետ, կանխատեսում, ՀՆԱ դեֆլյատոր, շեղում:

ՀՏԴ 336.74

ՀՀ ԴՐԱՄԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ԿԱՆԽԱՏԵՍԱՄԱՆ ՀԻՄՆԱԶԱՐՑԵՐԸ ԳՆՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐԻՏԵՏԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Ատենախոսության թեմա՝
Ազգային արժույթի փոխարժեքի վիճակագրական
վերլուծության և կանխատեսման հիմնահարցերը
(ՀՀ օրինակով)

Ռոբերտ ՄԵԼԻՔՅԱՆ
ՀՊՏՀ Ինֆորմատիկա և
վիճակագրություն ֆակուլտետի ասպիրանտ

Գիտական դեկավար՝
Մարտին ՖԱՅՐԱԴՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր

Արժույթների փոխարժեքների որոշման հիմքում օգտագործվում է գնողունակության պարիտետի տեսությունը: Համաձայն այս տեսության երկու երկրների ազգային արժույթները երկարաժամկետում ճշգրտվում են գնողունակության պարիտետի միջոցով: Ազգային արժույթի գնողունակության քանակական չափման համար կիրառվում է տվյալ երկրի սպառողական զամբյուղը, որը բաղկացած է ստանդարտ սպառողական ապրանքներից և ծառայություններից: Ներկայացնենք գնողունակության պարիտետի և համապատասխանաբար արժույթի փոխարժեքի կուրսը որոշող բանաձևը՝

$$\text{փոխարժեք}_{1,2} = P^d / P^f$$

Որտեղ՝ P^d / P^f - սպառողական զամբյուղների գներն են համեմատվող երկրներում

Պոլ Կրուգմանը իր աշխատություններից մեկում նշել է. «Գնողունակության պարիտետի տեսությունում ասվում է, որ երկու երկրների միջև փոխարժեքը ձևավորվում է տվյալ երկրներում գների հարաբերակցության հիման վրա»¹: Այս հարաբերակցությունը նշանակում է, որ մի երկրի մեկ միավոր արժույթը կամ դրա փոխարկումը երկրորդ երկրի արժույթի հետ կունենա միևնույն գնողունակությունը տարբեր երկրների սպառողական զամբյուղի ապրանքների գնման համար: Բացի առաջին զլխում նշված թերություններից, այս տեսությունը ունի այլ 21-րդ դարին բնորոշ թերություններ, մասնավորապես՝ գործնականորեն դժվար է առանձնացնել այնպիսի ապրանքների ծառայությունների համախմբություն, որոնք ունենան միևնույն արժեքը երկու երկրների բնակիչների համար:

Աղյուսակ 1.

ՀՆԱ դեֆլյատոր ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ՝ արտահայտված տոկոսով

Տարի	ՀՆԱ ԴԵՖԼՅԱՏՈՐ				
	Հայաստան	Վրաստան	Ուկրաինա	Ռուսաստան	Ղազախստան
2005	103.20	107.90	124.20	119.31	117.9
2006	104.60	108.50	114.70	115.17	121.5
2007	104.20	109.70	123.10	113.80	115.5
2008	105.90	109.70	128.60	117.96	121
2009	102.60	97.90	113.00	101.99	104.7
2010	107.80	108.50	113.80	114.19	119.6
2011	104.30	109.50	114.30	115.91	118.9
2012	98.80	101.10	108.10	109.09	104.8
2013	103.40	99.20	103.10	105.41	109.5
2014	102.30	103.80	115.90	107.50	105.8
2015	101.20	105.90	138.90	108.15	101.9
2016	100.50	104.00	117.10	103.61	113.6
2017 կանխատեսվող	102.64	103.99	112.46	105.70	111.53
2018 կանխատեսվող	103.50	102.95	109.00	104.26	106.49
2019 կանխատեսվող	104.00	102.98	107.47	103.87	105.46

(Տվյալները ստացվել են միջազգային արժույթային հիմնադրամի, Վրաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի և Հայաստանի պետական վիճակագրական պաշտոնական կայքերից)²

¹ Кругман П., Обстфельд М. Международная экономика. Теория и политика. –М.:ЮНИТИ, 1997.- էջ.401.

- ² <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2017/01/weodata/download.aspx>
- www.armstat.am
- https://ukrstat.org/operativ/operativ2016/vvp/def_vvp/def_2016r_n.htm

Մարդկանց նախընտրությունները կարող են տարբեր լինել համեմատվող երկրներում թե տնտեսական և թե աշխարհագրական դիրքի և կուլտուրայի հետ կապված, մասնավորապես կարելի է առանձնացնել ապրանքների և ծառայությունների հասանելիությունը, որակը, բնակչության կենսամակարդակը, շուկայի հագեցվածությունը և այլ գործոններ, որոնց միջոցով ձևավորվում են ապրանքների և ծառայությունների գները:

Աղյուսակ 2.

Գնողունակության պարիտետի և փոխարժեքի դինամիկան 2005-2016թթ.

Տարի	Վրաստան			Ուկրաինա			Ռուսաստան			Ղազախստան		
	դրամ/լարի	Փաստացի կուրսը	շեղումը	դրամ/գրիվեն	Փաստացի կուրսը	շեղումը	դրամ/ռուբլի	Փաստացի կուրսը	շեղումը	դրամ/տենգե	Փաստացի կուրսը (10 kzt)	շեղումը
2005	255.14	252.44	0.99	105.06	89.29	0.85	14.06	16.18	1.15	31.01	34.36	1.11
2006	245.97	233.59	0.95	95.81	82.24	0.86	2.77	15.28	1.20	26.69	32.97	1.24
2007	233.64	204.35	0.87	81.10	67.77	0.84	11.69	13.34	1.14	24.08	27.78	1.15
2008	225.55	205.85	0.91	66.78	58.98	0.88	10.50	12.32	1.17	21.08	25.43	1.21
2009	236.37	218.27	0.92	60.64	45.32	0.75	10.56	11.56	1.09	20.65	24.67	1.19
2010	234.85	209.52	0.89	57.44	46.99	0.82	9.97	12.31	1.23	18.62	25.35	1.36
2011	223.70	221.64	0.99	52.41	46.66	0.89	8.97	12.71	1.42	16.33	25.43	1.56
2012	218.61	243.46	1.11	47.90	49.74	1.04	8.13	12.95	1.59	15.40	26.96	1.75
2013	227.86	246.32	1.08	48.04	50.20	1.04	7.97	12.85	1.61	14.54	26.94	1.85
2014	224.57	235.69	1.05	42.41	35.23	0.83	7.59	10.92	1.44	14.06	23.23	1.65
2015	214.60	210.23	0.98	30.90	21.93	0.71	7.10	7.89	1.11	13.96	22.41	1.60
2016	207.38	203.68	0.98	26.52	18.79	0.71	6.88	7.22	1.05	12.35	14.00	1.13

(Հաշվարկը կատարվել է Microsoft excel ծրագրի միջոցով, ՄԱԿ-ի վիճակագրական խորհրդի կողմից հրապարակված "О результатах Глобального раунда международных сопоставлений ВВП" հաշվետվության և կենտրոնական բանկի հիման վրա)

Այնուամենայնիվ, հաշվի առնելով վերը թվարկված թերությունները, գնողունակության պարիտետը տալիս է արժույթի ուժեղ և թույլ գնահատված լինելու ճշգրիտ պատկերը: Արժույթի փոխարժեքի և գնողունակության պարիտետի համեմատության միջոցով հնարավոր է ստանալ փոխարժեքի թերագնահատվածության և գերագնահատվածության աստիճանը: Գնողունակության պարիտետը նաև համարվում է փոխարժեքի ապագա դինամիկայի հիմքը:

Միջազգային վիճակագրությունում արժույթների փաստացի փոխարժեքների համեմատության ժամանակ առավելությունը տրվում է գնողունակության պարիտետին քանի որ դրանք ավելի քիչ կախվածություն ունեն կոմյունկտուրային և քաղաքական գործոններից և մեծ մասամբ արտացոլում են իրական արժույթի փոխարժեքները: Գնողունակության պարիտետը ներկայումս համարվում է կարևոր տարր միջազգային հարթակում վիճակագրական համեմատությունների համար՝ լինելով հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների հատկապես երկրների ՀՆԱ իրական արժեքների գնահատող ցուցանիշ:

Մեր մոդելի հիմքում օգտագործվել են ՄԱԿ-ի վիճակագրական խորհրդի կողմից հրապարակված հաշվետվության ցուցանիշները³: Վերջիններս տեղ են գտել Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջում, որը նույնպես ծառայել է աղբյուր մեր մոդելը կառուցելու համար: ՄԱԿ-ի կողմից անցկացվող այս ծրագրի նպատակը կայանում է նրանում երկրների ՀՆԱ և ազգային հաշիվների այլ ցուցանիշները արտահայտվում են մեկ միասնական արժույթով, որը հեշտ է դարձնում այդ երկրների ցուցանիշները համեմատելու համար(Մեր հաշվետվության մեջ բոլոր ցուցանիշները արտահայտված են ԱՄՆ դոլարով): Ծրագրում ՀՆԱ-ի գնահատումը հիմնվում է վերջնական սպառման ապրանքների և ծառայությունների վրա, ըստ որի բոլոր գրանցվող ծախսերը վերաբերվում են վերջնական սպառման ապրանքներին և ծառայություններին:

Մեր գնողունակության պարիտետի հաշվարկման մեթոդաբանությունում մենք կիրառել ենք ՀՆԱ ինդեքս դեֆլատորը, ինչպես նաև միջին գների հարաբերակցությունը: Այս մեթոդով հաշվարկված գնողունակության պարիտետը կիրառվել է մեր կանխատեսման մեջ: ՀՆԱ դեֆլատորը ցույց է տալիս ՀՆԱ մեջ մտնող ապրանքների և ծառայությունների գների փոփոխությունը: ՀՆԱ դեֆլատորի հաշվարկման համար հավաքվում է ապրանքների և ծառայությունների որոշակի խումբ՝ սպառողական զանբյուլ, սակայն այդ զանբյուլը իրենից ներկայացնում է ոչ միայն ծառայությունների և ապրանքների գները, ինչպես սպառողական գների ինդեքսի փոփոխության դեպքում է, այլև պետության կողմից գնվող ներդրումային ապրանքների գները, ինչպես նաև համաշխարհային շուկայում շրջանառվող ապրանքների և ծառայությունների գները: Այսպիսով արժույթների գնողունակության փոփոխությունը գնահատելու համար, համեմատվող երկրների ապրանքների արժեքները հաշվարկելու փոխարեն կարելի է ճշգրտել այդ երկրների գնողունակության պարիտետը ՀՆԱ-ի դեֆլատորով, ինչպես միջին գների ինդեքս, որը արտացոլում է բոլոր այն ապրանքների և ծառայությունների փոփոխությունը, որոնք մտնում են ՀՆԱ-ի ինչպես նաև գնողունակության պարիտետի մեջ:

ՀՆԱ-ի դեֆլատորը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՀՆԱ դեֆլատոր=Անվանական ՀՆԱ/ Իրական ՀՆԱ

- <http://index.minfin.com.ua/index/wage/>
- http://www.geostat.ge/index.php?action=page&p_id=119&lang=eng
- http://geostat.ge/index.php?action=page&p_id=23&lang=eng
- http://stat.gov.kz/faces/publicationsPage/publicationsOper/homeNationalAccount/homeNationalAccountIntegrated?_afzLoop=5703038129683792#%40%3F_afzLoop%3D5703038129683792%26_adf.ctrl-state%3Dxmj4de94_4
- http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/en/main/

³ Результаты международных сопоставлений ВВП Российской Федерации и других стран
Copyright © Федеральная служба государственной статистики

Ասպիտով, այս մեթոդով հաջորդ տարվա գնողունակության պարիտետը ստացվում է ընթացիկ տարվա գնողունակության պարիտետը ճշգրտելով ՀՆԱ դեֆլյատորով: Վեր հանենք վերջինիս բանաձևը⁴:

$$P_{e+1}^a = P_e^a * D_{e+1}^a / D_{e+1}^b$$

Որտեղ՝ P^a -ն գնողունակության պարիտետն է (մեր դեպքում ՀՀ օրինակով), D_{e+1}^a, D_{e+1}^b համապատասխանաբար բազային և ուսումնասիրվող երկրների ՀՆԱ դեֆլյատորն են $e+1$ տարում, e - ընթացիկ տարին:

Մեր կանխատեսման մեջ կիրառվող երկրների ՀՆԱ դեֆլյատորը արդեն իսկ հաշվարկված վերցրել ենք յուրաքանչյուր երկրի պաշտոնական վիճակագրական կայքերում հրապարակված հաշվետվություններից, իսկ յուրաքանչյուր տարվա գնողունակության պարիտետը ստացվել է ՄԱԿ-ի վիճակագրական խորհրդի կողմից հրապարակված "О результатах Глобального раунда международных сопоставлений ВВП" հաշվետվության մեջ հաշվարկված 2005թ.-ի փաստացի հաշվարկված գնողունակության պարիտետը (սկզբնական արժեքները) ճշգրտելով տվյալ երկրի ՀՆԱ դեֆլյատորով:

Այսպիսով՝ քանի որ ՀՀ տնտեսությունը առավել մոտ է նախկին խորհրդային երկրների տնտեսությանը և այդ երկրները թե գների ինդեքսով և թե կառուցվածքով ունեն միանման սպառողական զամբյուղներ, ուստի համեմատել ենք նախկին խորհրդային երկրներից մի քանիսի գնողունակության պարիտետները և կատարել կանխատեսում: Նախկին ԽՍՀՄ երկրներից առանձնացրել ենք չորսը: Դրանք են՝ Վրաստան, Ղազախստան, Ուկրաինա և Ռուսաստան: Վեր ենք հանել այդ երկրների փաստացի գնողունակության պարիտետները հաշվարկված 2005թ.-ի ՄԱԿ-ի վիճակագրական խորհրդի կողմից (տես՝ աղյուսակ 2.) ինչպես նաև ՀՆԱ ինդեքս դեֆլյատորները (տես՝ աղյուսակ 1.) նախորդ տարվա հարաբերությամբ արտահայտված տոկոսով:

Աղյուսակ 2-ում առանձնացրել ենք ուսումնասիրվող երկրների գնողունակության պարիտետների և համապատասխան երկրի արժույթի փոխարժեքի դինամիկան արտահայտված ՀՀ դրամով, բացահայտել հաշվարկված գնողունակության պարիտետի շեղումը փաստացի փոխարժեքից (փաստացի փոխարժեք հարաբերած գնողունակության պարիտետի վրա): Աղյուսակից պարզ է դառնում, որ ԱՊՀ երկրների գնողունակության պարիտետները իրենց փոխարժեքների նկատմամբ շատ չեն շեղվում, ինչը նշանակում է, որ փաստացի կուրսը գրեթե ճշգրիտ արտացոլում է տվյալ երկրների արժույթների իրական գնողունակությունը:

Աղյուսակ 3.

Վրաստանի, Ուկրաինայի, Ղազախստանի և Ռուսաստանի կանխատեսվող փոխարժեքները 2017-2019թթ. համար

Տարի	2017	2018	2019
Վրաստան			
դրամ/լարի (կանխատեսվող պարիտետ)	204.69	205.78	207.82
Կանխատեսվող փոխարժեքը	213.84	217.08	221.36
Կանխատեսվող շեղումը	1.04	1.05	1.07
Ուկրաինա			
դրամ/գրիվեն (կանխատեսվող պարիտետ)	24.20	22.98	22.24
Կանխատեսվող փոխարժեքը	19.96	18.86	18.16
Կանխատեսվող շեղումը	0.82	0.82	0.82
Ռուսաստան			
դրամ/ռուբլի (կանխատեսվող պարիտետ)	6.69	6.64	6.64
Կանխատեսվող փոխարժեքը	9.10	9.12	9.23
Կանխատեսվող շեղումը	1.36	1.37	1.39
Ղազախստան			
դրամ/տենգե (կանխատեսվող պարիտետ)	11.37	11.05	10.89
Կանխատեսվող փոխարժեքը(10 kzt)	19.08	19.01	19.21
Կանխատեսվող շեղումը	1.68	1.72	1.76

(Հաշվարկը կատարվել է Microsoft excel ծրագրի միջոցով համաշխարհային բանկի կողմից հրապարակված տվյալների հիման վրա)⁵

Ընդ որում ամենամոտ հարաբերակցությունը Վրաստանի հետ է ինչը բացատրվում է նրանով, որ ՀՀ-ն լինելով սահմանակից և տնտեսությամբ մեծան Վրաստանին ապրանքների և ծառայությունների սպառողական զամբյուղի կառուցվածքով գրեթե չի տարբերվում, իսկ երկու երկրների արժույթների գնողունակությունը գրեթե հավասար է:

Օգտագործելով Միջազգային Արժույթի հինադրամի կողմից կանխատեսվող ՀՆԱ դեֆլյատորի ցուցանիշները մեր մոդելում ստանանք կանխատեսվող գնողունակության պարիտետները մեր կողմից ուսումնասիրվող երկրների համար 2017-2019թթ. համար: Գծային հավասարման օգնությամբ ստանանք շեղումը փոխարժեքի և պարիտետի նկատմամբ 2017-2019-ի համար: Բազմապատկելով կանխատեսվող գնողունակության պարիտետը կանխատեսվող շեղումի հետ կստանանք կանխատեսվող արժույթի փոխարժեքները ուսումնասիրվող երկրների համար: Կանխատեսված արժույթների փոխարժեքները ներկայացված են աղյուսակում 3-ում:

Այսպիսով, կանխատեսված ցուցանիշները արտահայտում են երկու երկրների փոխարժեքների իրական գնողունակությունները, սակայն փաստացի փոխարժեք չի կարող շեղվել մեծ տարբերությամբ, քանի որ ԱՊՀ երկրների տնտեսությունները իրենց բնույթով և սպառողական զամբյուղներով գրեթե չեն տարբերվում միմյանցից: Շեղման պատճառը

⁴ Paul McCarthy- Measuring the Size of the World Economy ICP Book, 2011 էջ 6

⁵<http://www.imf.org/external/pubs/ft/weo/2017/01/weodata/download.aspx>

Կարող է լինել միայն երկու երկրներում առկա հարկային և մաքսային օրենսդրությունների տարբերությունները որոնք անմիջականորեն ազդեցություն են ունենում տվյալ երկրների ապրանքների գների վրա, սակայն նորից նշենք, որ այդ շեղումը կլինի շատ փոքր և հարկ ենք համարում ընդգծել որ նոդելով կախատեսված փոխարժեքները արժանահավատ են:

Օգտագործված գրականություն

1. Кругман П., Обстфельд М. Международная экономика. Теория и политика. — М.: ЮНИТИ, 1997
2. Paul McCarthy- Measuring the Size of the World Economy ICP Book, 2011
3. <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2017/01/weodata/download.aspx>
4. www.armstat.am
5. https://ukrstat.org/operativ/operativ2016/vvp/def_vvp/def_2016r_n.htm
6. <http://index.minfin.com.ua/index/wage/>
7. http://www.geostat.ge/index.php?action=page&p_id=119&lang=eng
8. http://geostat.ge/index.php?action=page&p_id=23&lang=eng
9. http://stat.gov.kz/faces/publicationsPage/publicationsOper/homeNationalAccount/homeNationalAccount10.Integrated?_afrcLooop=5703038129683792#%40%3F_afrcLoop%3D5703038129683792%26_adf.ctrl-state%3Dxmpj4de94_4
10. http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/en/main/
11. Результаты международных сопоставлений ВВП Российской Федерации и других стран, Copyright © Федеральная служба государственной статистики

*Ներկայացվել է 10.11.2017թ.
Ընդունվել է տպագրության 26.12.2017թ.*